**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**իրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2023/05**

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2023/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 17-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 18-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N 1՝**

· Նշված բնութագրերում առկա չեն չափիչ սարքերի համար առաջնային հանդիսացող բնութագրերը, որոնք են՝ սարքերի ճշտության դասը, թույլատրելի շեղումները կախված ջերմաստիճանից և եղանակային այլ պայմաններից, չափումների կրկնելիության թույլատրելի շեղումները, ինչպես նաև չափումներին վերաբերող տեխնիկական այլ առաջնային պահանջներ: Օրինակ՝ սարքի շահագործման ջերմաստիճանը ուղղակիորեն կապ ունի չափումների արդյունքների ճշտության հետ, ուստի համարում եմ, որ պահանջել սարքի աշխատանքային ջերմաստիճանային միջակայք՝ առանց չափումների ճշտության անթույլատրելի է: Նշեմ նաև, որ եվրոպական առաջատար ընկերությունների պարզաբանմամբ իրենց արտադրած սարքերը նույնպես կարող են իրականացնել չափումներ նույնիսկ 80°C և ավել ջերմաստիճանային պայմաններում, սակայն չափումների ճշտությունն էականորեն իջնում է:

· Տեխնիկական բնութագրերում պահանջվում է, որ մատակարարը, ենթադրենք ՀՀ–ում գրանցված որևէ իրավաբանական անձ, պարտավոր է կատարել ստուգաչափում՝ ներկայացնելով համապատասխանելիության վկայական: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՀՀ–ում չունենք հավատարմագրված մարմին, ով իրավունք կամ հնարավորություն կունենա իրականացնել նման ստուգումներ կամ տրամաչափարկումներ և տալ համապատասխան վկայական: Առաջարկում եմ բոլոր սարքերի համար «կատարել ստուգաչափում և ներկայացնել համապատասխանելիության վկայական» արտահայտությունը փոխարինել «ներկայացնել ստուգաչափման վկայական» (գործարանի կամ հավատարմագրված կազմակերպության կողմից), քանզի կատարել նշանակում է սեփական մարդկային և տեխնիկական ռեսուրսներով համապատասխան պայմաններում իրականացնել որևէ գործողություն:

· Պահանջվող ճանապարհների գծանշման հաստության չափման սարքի համար նշված պահանջվող չափսերը արդյոք վերաբերում են

| | |
|---|---|
| | բուն սարքավորմանը: Խնդրում եմ պարզաբանել այս սարքի «մենյու»-ի բազմալեզու լինելու պահանջը, այն պարագայում, երբ այն ցույց է տալիս գծանշման հաստությունը միայն թվային արտահայտությամբ՝ 2 համակարգերով (իմպերական կամ |
| **Պարզաբանում N 1՝** | · Չափումները իրականացվելու են բնութագրում նշված ջերմաստիճանային միջակայքում, որի ժամանակ թույլատրելի շեղումը՝ նմանատիպ սարքերի համար, ստանդարտ է և կազմում է 2-3%:<br>· Ստուգաչափում, սերտեֆիկացում և դրանց հետ կապված այլ գործառույթներ ՀՀ-ում իրականացնում էկոնոմիկայի նախարարությանն առընթեր «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությունը:<br>· Մենյու է համարվում ոչ միայն էկրանին արտածվող տեղեկատվությունը, այլ նաև էկրանի շրջանակի վրա գրված ցուցանակները, ստեղների նշանակությունը և այլ գրառումներ: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

**ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2023/05** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Հեղինե Բաբաջանյանին:


***Հեռախոս՝ 010 54 21 76***

***Էլ. Փոստ՝*** *procurement@armroad.am*

***Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ***

**ОБЪЯВЛЕНИЕ**

**о разъяснении приглашения**

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№ 2.1 от 18 августа 2023 года
и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения «О закупках»

Код процедуры **CHD-GHAPDzB-2023/05**

Оценочная комиссия процедуры закупки под кодом **CHD-GHAPDzB-2023/05,** организованной с целью приобретения оборудований для нужд Фонда «Дорожный департамент», ниже представляет запрос, полученный 17.08.2023г. и предоставленный 18.08.2022г. по нему разъяснение относительно приглашения по тому же коду:

**Запрос № 1:**

· Указанные технические характеристики не включают первичные технические требования к оборудованиям: класс точности оборудований, допускаемые отклонения в зависимости от температуры и других погодных условий, допускаемые отклонения повторяемости измерений, а также другие первичные технические требования. Например, рабочая температура прибора напрямую связана с точностью результатов измерений, поэтому я считаю, что требовать диапазон рабочих температур прибора без точности измерений недопустимо. Также отмечу, что согласно разъяснениям ведущих европейских компаний, производимые ими оборудования также могут проводить измерения даже в температурных условиях 80°C и выше, но при этом точность измерений значительно снижается.

· Технической характеристикой требуется, чтобы поставщик, скажем, любое юридическое лицо, зарегистрированное в Республике Армения, обязан провести калибровку, предъявив сертификат соответствия. Необходимо учитывать факт, что в РА нет аккредитованного органа, имеющего право или возможность проводить такие проверки или калибровки и представить соответствующий сертификат.

Предлагаю для всех приборов заменить фразу "провести калибровку и предъявить сертификат соответствия" на "представить сертификат калибровки" (заводом или аккредитованной организацией), т.к. провести значит выполнить любую операцию в соответствующих условиях собственными человеческими и техническими ресурсами.

**Разъяснение № 1:** Измерения будут проводиться в диапазоне температуры, указанном в спецификации, при котором допустимое отклонение для подобных оборудований является стандартным и составляет 2-3%.

· Калибровку, сертификацию и другие функции связанные с этим в РА выполняется ЗАО «Национальный орган по стандартизации и метрологии» при Министерстве экономики.

· Меню – не только информация, отображаемая на экране, но и знаки отображенные на рамке экрана, значения клавиш и другие примечания.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии под кодом CHD-GHAPDzB-2023/05 - Эгине Бабаджанян.

Телефон **010 54 21 76**

Электронная почта: procurement@armroad.am

Заказчик: **Фонд «Дорожный департамент»**